34. ԹԱԳԱՎՈՐ ՄԵ ՈՒ ՈՒՐ ԷՐԿՈՒ ՏՂԵՆ

Կէղնի, չէղնի թագավոր մե ու էրկու տղա կէղնի։ Մեկ տղեն կաղու մոտ կկարթա, մեկ լէ՝ մուֆթուն։

Էդ թագավորի դռան հ՞առեճն էլ մի ծառ կէղնի։ Լաղլրգու բուն լէ էդ ծառի վրա կէղնի։ Էդ լաղլաղն է, տարին իրեք ձաք կրերա, միշտ էդրա ձաքեր կփիտնան։ Էրկու տարի, իրեք, էգրա ձաքեր կփիտնան, էն մեկ տարին լէ ձաքեր կմնան, մեր կփիտնա։

Էդ լաղլրգու իրիկն է գելնա կէրթա մե ուրիշ լաղլաղ մե կբերա, կէնա ուրին կնիկ։

Մե քանիմ օր կմնա, էդ որձ լաղլաղ կէրթա կրոշ բերելու, էդ էք լաղլաղ կկտցա, կկտցա էդ մե ձաք կփիթցու, կթալա ծառեն տակ, նիաթ կկախա ու կկանի։

Հ՚իրիկուն լաղլրգու իրիկ կրոշից գիգա, կտեսնի օր ուր կնիկ նիաթ կախուկ ա, կեսա.

— Ի՞նչի համար քու նիաթ էրեր ես։

Կեսա.— Ես նիաթ չէնիմ, ո՞րն էնե, դուն ինձի բերիր օր էդա ձաքերու վրրեն ուրիրնե, էսօր մե ձաք փիթցեր ա։

Էն լէ կվերցու կեսա.— Ըդրանց մոր էրեսի խերը..., ամեն տարի էդոնց ձաքեր կփիտնան։

Քենիմ օր կմնա մեջտեղ, լաղլաղ էլի գելնի կէրթա կրոշի։ Էգ մյուս լաղլաղն ա էլի կկտցա, մեկել էրկու ձաքն էլ կփիթցու ու կթալա ծառի տակ։

Թագավոր փանջարից թեմաշա կէնա, կեսա. «Ուխտ էղնի իմ հոդու վրեն, քենի օր ես էտա լագլագ տեսիմ, իմ կնիկն օր մեռավ, ես ուրիշ կնիկ պտի չբերիմ տղեքներու վրա»։

Կմնա մինչև հ'իրիկուն. էդ որ որձ լագլագ կառնի կըռշ ու գիդա, կիշկա էլի ուր կնիկ նիաթ էներ ու կաներ ա։

Կեսա.— Նիաթ ինչի՞ ես կախի էլի։

Կեսա.— Ես նիաթ չկախիմ. ո՞րն կախա. էրկու ձաք լէ էսօր ա փիթցեր ա։

Էն լէ կվերցու կեսա.— Էնգրանց մորը երեսի խերը կտրի, ե՞ր ընգոր մոր մոտեն ձաք մացեր ա օր էսօր մնա։

Կմնա ժամանակ մի, թագավորու կնիկ կմեռնի։ Թագավոր ուխտ կէնա օր չկարգվի։ Մե քենի տարի մեջ գընցի, ընդրա որջար քիբարներ կքոմին, թագավորին կեսին.

— Պետք ա քըգի կարգինք, թագավոր առանց կնիկ պտի չմնա։— Կբերին թագավոր զորով, խաթրով կկարգին։

Ժամանակ մե մեջ գընցի, թագավոր գելնի կէրթա հաջ։

Թագավորի կնիկն ա, կքոմա որջար քիբարներ, ուր կաղու տան տղեն, կառնի ու գիգա գավոթ։ Կուտին ու կխմին մինչև հ'իրիկվան, հ'իրիկվան հ'ըմենու իզին կիտա, բայց ուր տղին չի տա։ Տղեն կմնա մինչև անգան գախ, կեսա.

— Մարե, իմ իգին լէ տուր։

— Կեսա.— Չէ՛, քու իզին չըմ իտա։

Կեսա.— Ինչի՞ համար, մարե։

Կեսա.— Էսա գիշեր դու պտի իմ ծոց քնիս։

Տղեն կեսա.— Հավար, մադաթ, գու իմ մերն իս, ի՞նչպես էդպես բան կէղնի։

Կեսա.— Չէ՛, անկարելի ա օր իմ ծոց պտի քնիս։

Կեսա.— Դու քու աստված, օր էգպես ա, ելիմ դուս մե լմէժ էնիմ ու իգամ։

Տղեն ա կառնի իբրուղ մե ճուր, գելի դուռ ու կփախի, կէրթա կազու տուն։

Կմնա, մյուս օր, կրկին կկխանչա իր քաղքի որջար-քիբարներ, ուր պզտիկ տղեն մուֆթու տնեն կառնի դիգա ու կուտին, կխմին մինչև հ'իրիկուն, ամենու իզին կիտա, աղին չի տա։

Տղեն կեսա.— Մարե, իմ իզին լէ տուր։

Կեսա.— Չէ՛, քու իզին չըմ իտա։

Կեսա.— Հ'որի՞ն։

Կեսա.— Դուն պտի գիշեր իմ ծոց քնիս։

Կեսա.— Հավար, մաղաթ, էդպես բան մի չէղի. դու իմ ծնող մերն իս։

Տղեն յախեն շաղատա մոտեն, կիշկա ուր շորս բոլոր, կտեսի ուր խոր փետ էդտեխ դրուկ ա, կառնի զփետ ու գիգա մոր բոլոր, հրմալ կզարկա՞, մեր կփլխա։

Գելի կառնի էրկու խուրջի, կէրթա խրզինեն, էրկու խուրջի օսկի գըլնա, կառնի էրկու խատ ձի, ամեկու վրեն խուրջի մե, կթալա, կէրթա կազու տուն, ուր ախպոր մոտ, կեսա.

— Ախպեր, հ՚ելի թողինք ու էրթանք էս էրկրեն։

Տղեքներն ին կէրթան, շատ ու քիչ աստված գինա, կէրթան մե մեշի մեշ։ Ճոչ ախպերն ա, պզտիկ ախպոր կեսա.

— Ախպեր շան, դու ծիանք դաստքեշ արա, ես էրթամ, բալքի մե քիչ ճուր գտիմ էս մեշի մեջ, մենք լէ ծարավ մեռանք, մեր ծիանք լէ։

Կէրթան ու էրկու ախպեր իրարու վրեն կկորին։ Պզտիկ ախպերն ա կէրթա, մե քոշկի մե ռաստ գիգա, կեսա.

— Բարի հ՚իրիկուն ծե, ախպեր։

Կեսա.— Աստծու խերն ու բարին քեզ։

Կեսա.— Խոնախ չի տիրե՞ս, ախպեր շան։

Ցահուդին ա, կիշկա օր էրկու ծիու խուրջին լէ լիք օսկի է, կեսա.

— Կտիրիմ, ինչի՞ չտիրիմ։— Կքաշա ծիանք ներս, խուրջի օսկի վրանեն կառնե, կտանի կգնա հ՚օդի վերին դեխ։ Կմնա մինչի կես գիշեր։ Կառնի կամեն, գիգա գրնկնի խեղճ տղի վրա, հրմալ կփրթա, կէնա թյությունի պես, գըլնա մեշոկ, կտանի կթալա համամշու փողոց։ Համամշին լէ լուսուն գելի կիշկի օր տքոց գիգա իր փողոցից։ Կէրթա կբանա կիշկա օր մե խուռնի-խրեղեն տղա, չուտիս, չխմիս, ինե իշկիս. կվերցու կառնի, կէրթա։ Կտանի, կղեղա, կսախցու, կէնա իրան տղա։

Օրերուց մեկ, էդ յահուդին կէրթա համամ, կտեսի օր ուր սպանուկ տղեն օդի է, կեսա.

— Համամշի՛, էս ճանկ օսկի քզի. քու տղեն իգա իմ խետ լոխկնա։

Կեսա.— Թըխ իգա՛, հ՚որի՞ն չիգա։

Ցահուդին ա կտեսի հաստատ, օր էդ տղեն ա, օր ինք զարկե էրե ըրինդար, սրպիք վրեն կէրևա։

Գելի ու կէրթա յահուդին։

Աստծու բաներ, էդ տղի ճոչ ախպեր ղվռնե, զվռնե, էկեր ա էդ

քաղաք։ Էդ քաղքի թագավոր լէ մեռեր ա, դավլաթ-ղուշին կթողին, վին գլխու վրա օր իջի, էն էնին թագավոր։ Դավլաթ ղուշին ա, գիգա իջի էդ ճոչ ախպոր գլխու վրեն։

Գիդան կտփին ղէդ տղին, կեսին. «Էդ քյաչլիկ հ'ո՞ւստեն ա». կտփին ու կտանին էնին մե քոխ։

Կրկին գավլաթ-ղուշին կթողին, կէրթա կզվռնա էդ քոխի հ'երթիսեն գիջի ու կէրթա կնստի էդ մարթու գլխուն, կեսին. «Ջանըմ, աստծու մոտեն էղեր ա, էտիկ էնինք մեր թագավոր», ու կտանին կդնին թախտ։

Մե ժամանակ մե կրնցի, կեսին. «Թագավո՛ր, պետք ա քըղի նարդենք, թագավոր առանց կնիկ չմնա»։

Կէրթան մե օտար էրկիր, էդրան մե կնիկ կուզեն։ Գելնին խուրեր զիրար կքոմմեն օր էրթան իդրա կնիկ բերեն։ Կէրթան մե ծովու իսքալի ռաստ գիգան։

Յահուդին կդառնա, գիգա, կեսա.— Թագավոր ապրած, գյամին չէրթա։

Թագավոր կեսա.— Ըպա ի՞մալ կէղնի։

Կեսա.— Մեկ ու ճար տղա վին օր էղի, էնի տանինք թալինք ծովի մեջ, գյամին կքշվի։

Թագավոր կեսա.— Վի՞ն կա։

Յահուդին կեսա.— Համամշուն։— Յահուդու նիաթ լէ էն ա, օր զէդ տղեն կորցու, օր չըլլի ուր մոտեն դավի էնա։ Գելի, կառնի զտղեն ու կէրթա։

Կէրթան խարսի մոտ. խարսն ա, ինք ոըմադար կէղնի, դիմնա օր էդ տղեն ուր տեքրն ա, յահուդին կուզա օր զէդի կորցու։ Կբերա մե փետե շըքլ մի էդ տղի շորեր կհագու, տղի ֆաս կդնա գլուխ ու կպառկցու տղի ջլերու մեջ։ Զտղեն կդնա մե կութի մի ու կառնի մրտ ինք։ Կնստին գամին ու գիգան։

Յահուդին ծովի վրեն կտեսնա օր հանդե տղեն պառկուկի ջլերու մեջ, կվերցու հմա, ջլերով կթալա ծովու մեջ, կեսա. «Գնա՛, քըղի թողիմ սա՞ղ, օր իգաս դավի էնի՞ս»։

Գիգան թագավորի քաղաք։ Աստծու բաներ. էդ տղեքներու խեր հաջուց գիգա, կխարցու ուր կնկա մոտեն, կեսա.

— Տղեքներ իմա՞լ էղած։

Կեսա.— Նա դու էղնիս, նա քու տղեքներ, էկան ծեռ թալին ընձի, կովանք, էլան առան էրկու խուրջի օսկի ու գացին։

Խերն ի գելնի, թարքի դնկա կէղնի, կղվռնա, գիգա էղ քաղաք,

21—1086

օր ուր տղեն էղե թագավոր։ Բայց հ'ինք չգինա, թը ուր տղեն ա։ Կէղի ուր տղին կավաթչի։

Խարսն օր կրեբին տուն, էդ գիշեր օր կէրթան գյարղակ, կմնա կավաթչին, թագավորու պզտիկ տղեն լէ արթուք սանդուխն ա, բոլորի իզին գիտա, կէրթան, կմնան ուրանք, ուրանց։

Խարսն ա կեսա.— Ջում ես խեքաթ մե կա, չըսիմ, չըմ իգա քու մոտ։

Կեսա.— Դե՛, ասա։

Խարսն ա կառնի խեքիաթ գլխուց պատմել (հեքաթ պատմողը սկսեց նորից բառ առ բառ սկիզբեն պատմել, բայց պետք չկա կրկնել) խարսն ա մեկիկ մեկիկ ինչպես օր ես խեքաթ ըսի, ինք լէ կեսա ուր իրկան ու կեսրերին, ուր տեգեր։

Էդտեխ զիրար կճանչնան։ Խարս սանդուխի դուռ կբանա, կեսա.

— Թագա՛վոր, էսա քու ախպեր, էդա լէ քու խեր օր էղե քի կավաթչի, էնա լէ էն յահուդին, օր էրկու խուրշին օսկին առե։

Տղեն ա կբերա կգնա ուր խեր ուր տեխ թախթ, կբերին յահուդու գլոխ կզարկին։ Յոթն օր յոթ գիշեր դհոլ գուսան կզարկին, ու զթագավորն կպսակեն։

Էն խասավ ուր մուրազին, դու լէ խասար քու մուրազին։

Երկնուց իրեք խատ խնձոր իջավ։ Մեկ ըսողին, մեկ լսողին, մեկ էլ փայ էրողին։